

Գլուխ 6. ԽԱՂԱԴԱՐԱՆ

Մենք արդեն խոսեցինք այն մասին, որ խաղը երեխայի հիմնական զբաղմունքն է, աշխարհաճանաչողության նրա հիմնական կերպը:

Մեր խաղերը և առաջադրանքները կօգնեն ձեզ և ձեր երեխաներին շփվել ու հաղորդակցվել, խոսել այն մասին, ինչ դիտարկում և անում եք միասին, ընտանեկան պատմություններով հորինել և օգտագործել այդ պատմությունները պարզագույն գրքեր կազմելու համար, միասին խաղալ, ուսումնասիրել ձեզ շրջապատող աշխարհը:

Համատեղ գրույցները, խաղն ու աշխատանքը կօգնի, որ ձեր երեխայի մեջ զարգանան ամբողջ կյանքի ընթացքում սովորելու հնարավորություն տվող հմտություններ:

Դուք կարող եք նաև փոփոխել խաղերն ու առաջադրանքները, եթե դրանք ձեր երեխայի համար ձեզ հանհամապատասխան են թվում, կարող եք ավելի բարդացնել կամ պարզեցնել դրանք:

Երեխաներն ամենից լավ սովորում են, երբ ակտիվորեն մասնակցում են ինչ-որ բանի: Եթե երեխան հոգնում է, դադար տվեք: Այնպես արեք, որ երեխան հաճույք ստանա այս խաղերից և հաջողության հասնի:

Հիշե՛ք, երեխաները սովորում են, երբ

- խաղեր են խաղում
- լսում են ձեր պետմած պատմությունները, իսկ հետո խոսում են դրա մասին,
- զոսանքի ժամանակ կամ դրանից հետո խոսում են այն մասին, թե ինչ տեսան, երբ իրենք են պատմություններ պատմում կամ հորինում, արտասանում են, երգում, նկար են դիտում կամ էլ բացատրում են, թե ինչպես են ինչ-որ բան արել:

Խաղեր տառերի, բառերի և պատմությունների հետ

Կարող եք օգնել ձեր երեխային ճանաչել իր անվան տառերը, սովորել այդ տառերին համապատասխանող հնչյունները: Դրանով կօգնեք երեխային սովորել, որ

- բառերը կազմված են տառերի խմբերից
- տառերը ներկայացնում են որոշակի հնչյուններ
- բառը սկսվում է ձախ կողմի առաջին տառով
- բառը վերջանում է աջ կողմի վերջին տառով:

Երեխայի հետ միասին նկարներ կամ նկարազարդ գրքեր նայեք, գրքեր կազմեք, պատմություններ պատեք կամ հեքիաթներ կարդացեք: Դրանով օգնում եք նրանց սովորել,

- թե ինչպիսին է էջի կառուցվածքը
- որ նրանց սեփական նկարները նույնպես կարող են ծառայել որպես պատմությունների նկարազարդումներ.
- պարզել պատմության «հիմնական գաղափարը»՝ պատմության կամ գրքի համար նոր վերնագիր ընտրելով

Երեխայի հետ խաղալով դուք նրանց մեջ զարգացնում ու ձևավորում եք

- որոշակի հմտություններ
- վստահություն սեփական ուժերի նկատմամբ

Հուսով ենք, որ այս խաղերը միասին խաղալիս կամ վարժություններ կատարելիս հաճույք կստանաք թե՛ դուք. թե՛ ձեր երեխան

Իմ անվան տառերը

Սովորեցրեք երեխային իր անվան տառերը՝ կիրառելով ընտանիքի անունները

- Գրեք երեխայի անունը:
- Միասին հաշվեք անվան մեջ եղած տառերի քանակը:
- Օգնեք նրան ճանաչել տառերի տեսքը և անունները:
- Գրեք ընտանիքի որևէ անդամի անունը երեխայի անվան տակ:
- Երեխայի հետ քննարկեք, թե ինչով են նման և տարբեր այդ անունները:

Համընկնող տառեր

Գրեք երեխայի անվան տառերը սովորաբար վրա:

Կտրեք սովորաբար և պատրաստեք քարտեր. յուրաքանչյուր տառից՝ երկու հատ:

Քարտերը շրջեք երեսով դեպի ներքև:

Խաղացողներից յուրաքանչյուրը շրջում է երկու քարտ և ասում է գրված տառերի անունները: Եթե բացած քարտերի վրայի տառերը համընկնում են, քարտերը վերցնում է իրեն: Եթե՝ ոչ, նորից շրջում են քարտերը և խառնում մյուս քերտերին:

Շարունակեք խաղը մինչև բոլոր համընկնող տառերը գտնվեն:

Ինչպե՞ս կարելի է փոփոխել խաղը և հարմարեցնել ձեր երեխային

Եթե երեխան արդեն կարող է գրել իր անվան տառերը, նա կարող է ինքը պատրաստել խաղի քարտերը:

Եթե երեխան գիտի իր անվան տառերի անունները, նոր տառեր ընդգրկելու նպատակով օգտագործեք ընտանիքի մյուս անդամների կամ ընկերների անունները:

Եթե երեխան կարող է ճանաչել այբուբենի բոլոր տառերը, քարտերի վրա առանձին տառերի փոխարեն կարող եք գրել ընտանիքի անդամների անունները:

Բառաքարտեր

- Խնդրեք երեխային ասել 5 բառ, որոնք ցանկանում են սովորել կարդալ:
- Այդ բառերը գրեք քարտերի վրա՝ յուրաքանչյուր բառով պատրաստելով երկու քարտ:
- Շրջեք բոլոր 10 քարտերը երեսով դեպի ներքև:
- Հերթով շրջեք երկուական քարտ:
- Կարդացեք քարտերի վրայի բառերը: Եթե դրանք նույն բառն են, ապա խաղացողը պահում է քարտերը:
- Խաղը շարունակվում է այնքան, մինչև գտնվում են բոլոր զույգ բառերը:

Խաղի վերջում գրուցեք բառերի մասին: Ի՞նչ ընդհանուր տառեր կան բառերում: Ո՞րն է յուրաքանչյուր բառի առաջին տառը: Քանի՞ տառ կա յուրաքանչյուր բառում:

Ինչպե՞ս կարելի է փոփոխել խաղը և հարմարեցնել ձեր երեխային

- Առանձին բառեր կարդալը հեշտ առաջադրանք է: Եթե այս վարժությունը դժվար է ձեր երեխայի համար, կարող եք խաղալ միայն ձեր ընտանիքի անդամների անուններով կամ երեխային լավ ծանոթ այլ բառերով:
- Խաղը մի քանի անգամ խաղալուց հետո երեխան կկարողանա ինքնուրույն կարդալ այդ բառերը: Այդ դեպքում, եթե երեխան ցանկություն ունի նոր բառեր կարդալ սովորել, խնդրեք նրան ընտրել ևս 5 բառ և խաղացեք 10-ի փոխարեն 20 քարտով:

Միասին կարդացեք նկարը

- Ցույց տվեք երեխային որևէ նկար (ավելի հարմար կլինի, որ նկարում մարդիկ լինեն, կենդանիներ, իրադարձություններ): Խնդրեք երեխային խոսել նկարի մասին:
- Երեխային մանրամասնորեն պատմել խրախուսելու համար կարող եք որոշակի օգնող հարցեր տալ, օրինակ՝
 - Ի՞նչ է տեղի ունենում նկարում
 - Ովքե՞ր են, ի՞նչ են անում:
 - Օրվա ո՞ր ժամն է: Ինչպե՞ս իմացար:
 - Ի՞նչ է տեղի ունեցել նկարի պահից առաջ:
 - Իսկ ի՞նչ կարող է տեղի ունենալ հետո:

Այս և նման այլ հարցերը, որոնք ձեզ կհուշեն կոնկրետ նկարները, կօգնեն երեխային ավելի մանրամասն խոսել:

Օգնեք ձեր երեխային օգտվել ածականներից և մակբայներից, երբ նա նկարագրում է, թե ինչ է տեսնում և ինչ է կատարվում:

Խաղի մեկ այլ տարբերակում կարող եք վերցնել ձեր ընտանեկան որևէ հանդիսություն կամ իրադարձություն պատկերող նկար, որին երեխան ականատես կամ մասնակից է եղել: Ասե՛նք՝ դա կարող է լինել նրա ծննդյան օրվա խնջույքը պատկերող ինչ-որ նկար:

Խնդրեք նրան պատմել այն ամենը ինչ հիշում է, դարձյալ օգնեք հարցերով.

- Ի՞նչ եղավ:
- Ովքե՞ր էին եկել:
- Ի՞նչ նվերներ էին քեզ բերել:
- Ինչպե՞ս էիք քեզ զգում և այլն:

Միասին գիրք պատրաստեք

- Մի քանի թերթ թուղթ միասին ծալեք մեջտեղից՝ գիրք պատրաստելու համար
- Խնդրեք երեխային պատմել, թե ինչ է անում օրվա այս կամ այն ժամին (առավոտյան, քնելուց առաջ, մանկապարտեզում, բակում...)
- Խնդրեք երեխային մի քանի նկար նկարել իր պատմության մասին գրքի միջին երկու էջերի և շապիկի վերջին էջի վրա:
- Յուրաքանչյուր նկարի ներքևում գրի առեք այդ նկարի մասին երեխայի ասածը:
- Գրքի համար վերնագիր մտածեք և թող ձեր երեխան գրքի շապիկի համար նկար նկարի:
- Գիրքը միասին կարդացեք և ցույց տվեք ընտանիքի մյուս անդամներին:

Ինչպե՞ս կարելի է փոփոխել խաղը և հարմարեցնել ձեր երեխային

Եթե երեխան դեռ նոր է սովորում նկարել,

- առաջարկեք, որ առարկաներ կամ մարդկանց նկարելու փոխարեն գծերի և ձևերի հետաքրքիր համադրություններով «ձևավորումներ» անի:
- Եթե երեխան հեշտությամբ է նկարում և կարող է տառեր գրել, խնդրեք նրան, որ ասի, թե ինչ է ուզում գրել յուրաքանչյուր նկարի տակ, իսկ դուք օգնեք, որ նա գրի առնի այդ բառերը:

Կարո՞ղ ես տառ գտնել

- Երբ երեխայի հետ միասին զբոսնում եք փողոցում, կարող եք տառեր որոնել: Օրինակ, ասեք՝ «Ես տեսնում եմ Գևորգի անվան առաջին տառը»: Ապա օգնեք, որ նա էլ փողոցի ցուցանակներում կամ գովազդներում գտնի ձեր տեսած տառը:
- Հետո հերթն անցնում է երեխային: Նա է գտնում իրեն ծանոթ որևէ տառ, հայտարարում է, ասենք՝ «Ես տեսնում եմ արևի առաջին տառը/ կամ ա-տառը»: Հիմա էլ դուք եք փորձում գտնել նրա տեսած տառը:

Ինչպե՞ս կարելի է փոփոխել խաղը և հարմարեցնել ձեր երեխային

- Եթե երեխան նոր է սովորում ճանաչել տառերը, սկզբում կենտրոնացեք միայն մեկ կամ երկու տառի վրա:
- Եթե երեխան արդեն ճանաչում է տառերը, ուշադրություն դարձրեք այն բառերի վրա, որոնք հաճախ են հանդիպում ձեր ճանապարհին: (խանութների անուններ, երթևեկության նշաններ և այլն):

Միասին ոտանավոր կարդացեք

- երեխայի համար որևէ ոտանավոր կարդացեք կամ երգ երգեք:
- Կարդացեք կամ երգեք 2-րդ անգամ և թող երեխան այս անգամ միանա ձեզ:
- Հաջորդ օրը նորից կարդացեք նույն բանաստեղծությունը կամ երգեք երգը:
- Երբ երեխան մտապահի բանաստեղծությունը կամ երգը, օգնեք նրան կարդալ/երգել ձեզ հետ միասին:

Ես մտածում եմ մի բառի մասին, որը սկսվում է

Կարող եք երեխային առաջարկել գուշակության մի ուրախ խաղ խաղալ:

Ասեք նրան. «Ես մտածում եմ մի բառի մասին, որը սկսվում է հնչյունով»

(Օրինակ կարող եք երեխայի անվան առաջին հնչյունն ասել: Թող երեխան գուշակի ձեր մտապահած բառը:

Ապա երեխայի հետ գտեք նույն հնչյունով սկսվող իրերի ու առարկաների, մարդկանց անուններ (ասենք՝ Ա - արև, արագիլ, աշուն, Անահիտ): Կարող եք նաև գրանցել այդ բառերը և հետո ցուցակը կարդալ երեխային: Ամեն անգամ նոր բառ ավելացնելիս կրկնեք ամբողջ ցուցակը:

Ինչպե՞ս կարելի է փոփոխել խաղը և հարմարեցնել ձեր երեխային

- Եթե երեխան դժվարանում է այդ հնչյունով սկսվող բառեր գտնել, կարող եք օգնել նրան նոր բառեր գտնել:
- Եթե երեխան կարողանում է ճանաչել ու գտնել այդ հնչյունով սկսվող մի քանի բառ, կարող եք օգնել նրան՝ ցուցակին նոր բառեր ավելացնելով:
- Օգնեք երեխային հասկանալ նոր բառերի իմաստը:
- Կրկնեք վարժությունն այլ հնչյուններով: Կապեք հնչյունը դրա տառի հետ: Հնարավորության դեպքում կազմեք այդ հնչյունով սկսվող բառերի ցուցակ: Օրինակ՝ Կարեն – կուտ, կաթ, կարագ, կեռաս, կատու...

Նկարի խաղարկում

- Որևէ նկար ցույց տվեք երեխային:
- Նկարը որպես սկզբնական օգտագործելով՝ օգնեք նրան խաղարկել այն, ինչ տեղի է ունենում նկարում կամ ինչ իր կարծիքով տեղի է ունենալու հետո:
- Հարցրեք երեխային, թե ինքը որ «հերոսն» է ուզում լինել: (Հիշեք, որ երեխան կարող է ցանկություն հայտնել լինել ծնող կամ որևէ կենդանի: Դա շատ բնական է, քանի որ նրանք չեն ուզում երեխա լինել):
- Ասեք ձեր երեխային, թե դուք որ հերոսի դերն եք խաղալու:
- Կրկնեք «ներկայացումը»՝ ավելացնելով մի տեսարան, որը կարող էր նախորդել նկարի տեսարանին:
- Երեխայի հետ նկարը խաղարկելիս օգնեք նրան երկխոսություն հնարել իր «հերոսի» համար:

Ինչպե՞ս կարելի է փոփոխել խաղը և հարմարեցնել ձեր երեխային

- Եթե երեխան դժվարանում է գտնել, թե ինչ կարող է ասել իր հերոսը, ստանձնեք մեծահասակի դերը և հարցեր տվեք նրան, որոնք կօգնեն «խոսեցնել» իր հերոսին:
- Եթե երեխան խանդավառությամբ խաղարկում է պատմությունը, խրախուսեք նոր հերոսներ ավելացնել պատմությանը, կամ այլ երեխաներ ու մեծահասակներ ընդգրկեք «խաղի» մեջ (ասենք՝ քույրիկին, եղբորը: տատիկին կամ հայրիկին):
- Առաջարկեք այլ պատմություններ հորինել և խաղարկել՝ ներգրավելով նաև իր ընկերներին:

Նկարագրողեք բանաստեղծությունը կամ երգը

- Ձեր երեխային դուր եկած կամ նոր սովորած բանաստեղծությունը արտագրեք (կամ տպագրեք) առանձին էջի վրա:
- Կարդացեք նրա համար և քննարկեք, թե ինչ կցանկանար կամ ինչ կարող է նկարել բանաստեղծության էջի լուսանցքներին:
- Երբ երեխան վերջացնի նկարելը, քննարկեք նկարը: Կարող եք , օրինակ, ասել. «Տեսնում եմ, ահագին շատ մանրամասներ ես նկարել» (նշեք, թե ինչ) կամ «Տեսնում եմ, օգտագործել ես այսինչ գույնը» (նշեք գույները, կամ բաց ու մուգ գծերը):

- Օգնեք երեխային մտածել, թե ուրիշ ինչ կարելի է ավելացնել նկարին (ի՞նչ կարող ես ավելացնել նկարին, որպեսզի այն ավելի շատ բան ցույց տա այդ տեղի, մարդկանց կամ իրադարձությունների մասին»:

Ինչպե՞ս կարելի է փոփոխել խաղը և հարմարեցնել ձեր երեխային

- Եթե երեխան հաճույքով է նկարում, առաջարկեք նկարազարդել նաև մեկ այլ բանաստեղծություն, երգ կամ հեքիաթի որևէ դրվագ:
- Եթե երեխան դժվարանում է նկարել այն, ինչ կատարվում է ոտանավորում/երգում, առաջարկեք տեքստի հետ առնչվող որևէ նկար նկարել:

Հանգավորվող զույգեր

- Երբ երեխաները լսում են հանգ ունեցող ոտանավորներ/երգեր, օգնեք նրանց նկատել բառերի վերջին հնչյունների ներդաշնակությունը: Իրենց լսած բառերի հնչյունները տարբերակելու ունակությունը կարևոր հմտություն է երեխաների համար, որը նրանք պետք է ձեռք բերեն ինքնուրույնաբար կարդալ և գրել սկսելուց առաջ:
- Միասին զբոսնելիս կամ տնային աշխատանք կատարելիս խնդրեք ձեր երեխային գտնել հանգավորվող բառեր:

Ինչպե՞ս կարելի է փոփոխել խաղը և հարմարեցնել ձեր երեխային

- Եթե երեխան դժվարանում է հանգավորվող բառերի օրինակներ գտնել, սվեք նրան որևէ կարճ պարզ ոտանավոր՝ հանգավորվող բառերով և խնդրեք նրան այն բառերը, որոնք հանգավորվում են:
- Եթե այս առաջադրանքը դժվար չէ երեխայի համար, կարող եք կազմել հանգավորվող բառերի ցուցակ (բառային ընտանիքներ) և ամեն անգամ, երբ երեխան նոր բառ գտնի, ավելացրեք այն ցուցակին:

Ընտանեկան պատմություններ

Երբ երեխաները լսում են, թե ինչպես եք պատմում, իսկ հետո քննարկում են պատմածը, դուք օգնում եք նրանց սովորել, թե ինչպես են այդ պատմությունները «ստեղծվում»: Քննարկեք նրանց հետ, թե ինչ է կատարվում հերոսների հետ այդ պատմություններում: Սրանք այն վարժություններն են, որ նրանք անելու են հետագայում, երբ սկսեն ինքնուրույն գրքեր կարդալ:

Սովորաբար պատմություններն ունենում են բովանդակություն, գործողության վայր, սահմանափակ թվով հերոսներ: Ընտանեկան պատմություններ պատմելիս պատկերացրեք գործողության վայրը՝ հնարավորինս մանրամասներով: ՄտՓորձեք առավել մանրամասն նկարագրել պատմության հերոսներին (ի՞նչ էին հագել, ի՞նչ տեսք ունեին, ինչպե՞ս էին իրենց զգում): Ընտանեկան փոքրիկ պատմություններ պատմեք ձեր երեխաներին և օգնեք նրանց ուշադիր լսել և մտապահել լսածը: Դա կօգնի նրանց դառնալու հմուտ ունկնդիրներ:

Ընտանեկան պատմությունները հրաշալի միջոց են օգնելու համար, որ երեխան նկատի ձեր համատեղ ընտանեկան կյանքի զվարճալի, դժվար և հիասքանչ պահերը:

- Հիշեք որևէ բան, որ կատարվել է ձեզ հետ, երբ դուք ձեր երեխայի տարիքին էիք, կամ պատմություններ պատմեք երեխային նրա մանուկ օրերի մասին (ինչպես է ծնվել, ինչպես է արել իր առաջին քայլերը և այլն):

- Պատմելիս ավելացրեք նկարագրական մանրամասներ, որպեսզի օգնեք երեխային ավելի լավ պատկերացնելու այդ տեսարանները:
- Պատմությունից հետո խոսեք երեխայի հետ, քննարկեք, թող նա հարցել տա: Դուք կնկատեք, որ պատմության մասին միմյանց հետ խոսելիս լրացուցիչ մանրամասներ եք ավելացնում պատմությանը: Դա հրաշալի է: Երբ երեխան հարցնում է, թե ինչպես և կամ ինչու է ինչ-որ բան տեղի ունեցել, նա ցույց է տալիս, որ քննադատաբար է մտածում պատմության մասին:
- Մի քանի ընտանեկան պատմություններ պատմելուց հետո, հարցրեք երեխային, թե որ պատմությունը կուզենար նկարագարողել:
- Պատմությունը գրի առեք թղթի վրա, բայց ազատ լուսանցք թողեք, որ երեխան կարողանա նկարագարողել այն

Ինչպե՞ս կարելի է փոփոխել խաղը և հարմարեցնել ձեր երեխային

- Եթե երեխան հաճույքով է նկարագարում պատմությունը, գրի առեք նաև այլ պատմություններ, որ նա նկարագարի:
- Հետո նորից կարդացեք այդ պատմությունները և դիտեք երեխայի «ձևավորումները»:

Ինչպե՞ս հարցազրույց վարել

Այս վարժությունները ցույց կտան, թե ինչպես օգնեք երեխային տեղեկություններ հավաքելու նպատակով հարցազրույցներ անցկացնել մարդկանց հետ:

Մարդկանց մեծ մասը հաճույքով է խոսում իր ընտանիքի, աշխատանքի և սիրած զբաղմունքի մասին: Տեղեկություններ հավաքելու նպատակով հարցեր տալ սովորելը կարևոր հմտություն է, որը կարող է նպաստել երեխայի զարգացմանը: Դուք և երեխան հետո կօգտագործեք ստացված տեղեկությունները և կստեղծեք նոր գրքեր ու պատմություններ:

- Միասին որոշեք, թե ում հետ պետք է հարցազրույց վարի երեխան: Դա կարող է լինել ընտանիքի անդամ կամ ընկեր:
- Կարող եք նաև հարցեր տալ մոտակա խանութի վաճառողին կամ մոտակա գրասենյակի աշխատակցին, արդյո՞ք համաձայն են երեխային հարցազրույց տալ:

Ինչպե՞ս կարելի է փոփոխել խաղը և հարմարեցնել ձեր երեխային

Եթե հնարավոր է, հարցազրույցի ընթացքում խրախուսեք երեխային նկարել այնպիսի նկարներ, որոնք կօգնեն նրան հիշել որոշ հարցերի պատասխանները:

Տուն վերադառնալուց հետո առաջարկեք երեխային իր սեփական բառերով պատմել իր ստացած տեղեկությունների մասին: Երեխային ասեք, որ գրի եք առնելու նրա պատմածը:

Նամակագրություն

Ընտանիքի անդամների հետ պատմությունները փոխանակելու մի ձևն էլ նամակ գրելն է: Նամակ գրելը պատճառ կհանդիսանա, որ երեխան գրանցի տեղեկությունները ինչպես նկարներով, այնպես էլ բառերով: Նա նաև կսովորի գրել հասցեները:

Հետո, երբ երեխան ձեզ հետ միասին գնա փոստ նամակն ուղարկելու, կարող է հարցեր տալ նաև փոստի աշխատակիցներին՝ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար:

- Օգնեք երեխային որոշել, թե ում է ուզում նամակ ուղարկել:
- Թող մտածի, թե ինչ է ուզում հայտնել և թե ինչ կարող է նկարել:

- Առաջարկեք մի նկար նկարել:
- Խնդրեք պատմել, թե ինչ է ուզում հայտնել և գրեք նրա բառերը նկարի տակ կամ թղթի մյուս երեսին:
- Ցույց տվեք այն անձի հասցեն, որը ստանալու է նամակը: Առաջարկեք գրել հասցեի մի մասը կամ ամբողջությամբ ծրարի վրա:
- Տարեք նամակը մոտակա փոստատուն և ուղարկեք:

Ինչպե՞ս կարելի է փոփոխել խաղը և հարմարեցնել ձեր երեխային

- Եթե երեխան դեռ չի գրում, կարող եք ինքներդ ծրարի վրա գրել հասցեն: Հետո ցույց տվեք նրան ձեր ստացած որևէ նամակ և խնդրեք ծրարի վրա գտնել ձեր հասցեն:
- Եթե երեխան կարողանում է գրել թվերը, խնդրեք գրել երկու հասցեների թվերը:
- Եթե երեխան սկսում է տառեր և բառեր արտագրել, կարող եք թղթի վրա գրել հասցեն, իսկ հետո խնդրել երեխային արտագրել այն ծրարի վրա:

Լսել և պատմել

- Խնդրեք երեխային ուշադիր լսել ձեր պատմած կամ կարդացած որևէ պատմություն կամ հեքիաթ:
- Վերջացնելուց հետո խնդրեք վերապատմել իր լսածը:

Ահա մի քանի հարց, որոնք կօգնեն երեխային վերարտադրել ձեր պատմածի բոլոր մանրամասները.

- *Ի՞նչ եղավ սկզբում:*
- *Ի՞նչ եղավ դրանից հետո:*
- *Ի՞նչ տեսք ուներ հերոսը:*
- *Ինչպե՞ս էին զգում իրենց հերոսները:*
- *Ինչպե՞ս վերջացավ պատմությունը:*
- Մեջտեղից ծալեք թուղթը: Խնդրեք երեխային վերնագրել պատմությունը և գրեք վերնագիրը տիտղոսաթերթին:
- Օգնեք նրան որոշել, թե ինչ է նկարելու պատմության յուրաքանչյուր էջին:
- Հետևեք, որ յուրաքանչյուր էջի ներքևի մասում ազատ տեղ թողնի տեքստը գրելու համար:
- Վերջում առաջարկեք նկարագարել գրքի կազմը:

Խնդրեք երեխային նորից պատմել պատմությունը և նկարների տաք գրեք նրա ասածները: Կարդացեք «գիրքը» երեխայի համար և առաջարկեք, որ գիրքը ցույց տա ու պատմի նաև ընտանիքի որևէ անդամին կամ ընկերոջը:

Ինչպե՞ս կարելի է փոփոխել խաղը և հարմարեցնել ձեր երեխային

- Եթե երեխան դժվարանում է նկարել, քաջալերեք նրան: Կարևոր չէ, որ նրա նկարները մանրամասն կամ դիպուկ չեն: Կարևոր է, որ երեխան վստահություն զգա նկարելու իր առաջին փորձերը կատարելիս:
- Եթե երեխան հաճույքով է նկարում, թուղթ տվեք առաջարկեք հնարել մի պատմություն, որի մեջ առնվազն 3 բան է կատարվում:
- Երեխան կարող է նկարագարել իր պատմությունը և օգտվելով նկարներից պատմել այն իր ընկերոջը:

Խաղ ստեղծեր

Այս խաղը կարող եք օգտագործել, որպեսզի սովորեցնեք ձեր երեխային ճանաչել ծանոթ և ոչ այնքան ծանոթ տառեր, անուններ կամ բառեր:

- Պատրաստեք այնպիսի քարտեր, որ երեխան կարող է կարդալ: Դրանք կարող են լինել պարզապես երեխայի իմացած տառերը կամ բառեր, որ նա կարող է կարդալ: Յուրաքանչյուր բառը կամ տառը պետք է գրված լինի երեք քարտի վրա: Ավելացրեք մի քանի բառ կամ տառ, որ ձեր երեխան դեռ չի կարողանում կարդալ:
- Խաղի նպատակը նույն տառով կամ բառով բոլոր երեք քարտերը հավաքելն է: Երբ խաղացողը հավաքում է բոլոր երեք քարտերը, նա դնում է դրանք իր առաջ երեսով դեպի վեր: Շահում է նա, ով առաջինն է ազատվում իր բոլոր քարտերից:

Ինչպես են խաղում այս խաղը

- Քարտերը խառնում են և բաժանում են 2 խաղացողներին, յուրաքանչյուրին՝ հինգ քարտ: Մնացած քարտերը դրվում են սեղանի մեջտեղում՝ երեսով դեպի ներքև:
- Առաջին խաղացողը հարցնում է մյուսին, արդյոք նա ունի իր ուզած որոշակի քարտը: Օրինակ՝ եթե առաջին խաղացողն ունի «ես» բառով քարտը, հարցնում է երկրորդին, արդյո՞ք նա ունի այդ բառով քարտ:
- Եթե երկրորդ խաղացողն ունի այդպիսի քարտ, պետք է տա առաջին խաղացողին: Իսկ եթե չունի, ասում է «Քարտ վերցրու»:
- Առաջին խաղացողը սեղանի վրայի կույտից վերցնում է մի քարտ՝ ավելացնելով իր ունեցած քարտերին:
- Այժմ մյուս խաղացողն է պահանջում իր ուզած քարտը: Նա կամ ստանում է այդ քարտը, կամ էլ քարտ է վերցնում սեղանի վրայից:
- Երբ խաղացողներից մեկը հավաքում է նույն տառով կամ բառով երեք քարտերը, դրանք դնում է սեղանի վրա՝ երեսով դեպի վեր:
- Խաղն ավարտվում է, երբ խաղացողներից մեկն այլևս քարտ չի ունենում:

Ինչպե՞ս կարելի է փոփոխել խաղը և հարմարեցնել ձեր երեխային

- Եթե ձեր երեխան նոր է կարդալ սովորում, խնդրեք խաղացողներին ցույց տալ այն քարտը, որն իրենք փնտրում են: Ձեր երեխան հնարավորություն կունենա տեսնել մյուս խաղացողի ուզած քարտը: Կարող եք նաև օգնել նրան ճիշտ կարդալ իր քարտերի վրայի տառը կամ բառը:
- Եթե երեխան կարդում է որոշ բառեր, հարցրեք նրան, թե ինչ նոր բառեր է ուզում սովորել, և գրեք այդ բառերը նոր քարտեր պատրաստելիս:

Կոլաժ պատրաստեք

- Խոսեք երեխայի հետ որևէ թեմայի, ասենք՝ տարվա եղանակների մասին, հետո խնդրեք կոլաժ պատրաստել տարվա որևէ եղանակի թեմաներով:
- Կոլաժի հիմքի համար պետք է ամուր թուղթ կամ ստվարաթուղթ:
- Քննարկեք երեխայի հետ, թե ինչ է ուզում մտցնել կոլաժի մեջ տարվա այդ եղանակը ցույց տալու համար:
- Տվեք երեխային տարբեր տեսակի թղթի կամ գործվածքի կտորներ, որպեսզի նա կտրատի դրանք և օգտագործի իր կոլաժում:
- Խնդրեք երեխային կտրատել կոլաժի բաղադրիչները և ստանձել դրանք հիմքի վրա:
- Խնդրեք երեխային որևէ անուն տալ իր կոլաժին, օգնեք նրան գրել այդ անունը և փակցրեք այն կոլաժի ստորին մասին:

Ինչպե՞ս կարելի է փոփոխել խաղը և հարմարեցնել ձեր երեխային

Երբ ձեր երեխան սկսի դպրոց հաճախել, նրան պետք կլինեն մանր մկանային շարժումների լավ հմտություններ՝ գրավոր աշխատանքները կատարելու համար:

Մկրատով աշխատելը կօգնի ամրապնդելու երեխայի շարժողական հմտությունները:

- Եթե վարժությունը դժվար է երեխայի համար, տվեք նրան թղթի նեղ շերտեր, որոնք կարելի է կտրել մկրատի մեկ չրթոցով:
- Քանի դեռ երեխան չի սովորել մկրատով աշխատել, կտրելու համար նրան գործվածք կամ շատ բարակ թուղթ մի տվեք:
- Եթե վարժությունը հեշտ է երեխայի համար, առաջարկեք պատրաստել չորս կոլաժ՝ մեկական տարվա յուրաքանչյուր եղանակի համար:
- Օգնեք նրան որոշել, թե ինչպես պետք է կատարի առաջադրանքը, պատկերի այն, ինչ սիրում է անել տարվա յուրաքանչյուր եղանակին, ստեղծել բնապատկեր տարվա յուրաքանչյուր եղանակի համար, ներկայացնել որևէ բույսի աճի տարեկան փուլը:
- Երեխայի հետ տարվա եղանակները քննարկելով՝ դուք նաև օգնում եք նրան հաղորդակցվել ուրիշի հետ իր իմացած և իրեն հետաքրքրող բաների մասին:
- Հիշեք, որ խոսելը և լսելը երկու կարևոր հմտություններ են, որոնք կարող եք օգնել զարգացնելու ձեր երեխայի մեջ, մինչև նա կսովորի կարդալ ուրիշների ասածի մասին և գրի առնել սեփական մտքերն ու տեղեկությունները:

ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԽԱՂԵՐ

Գտեք համընկնող քարտը

- Պատրաստեք 1-10 թվերով քարտերի երկու հավաքածու:
- Խնդրեք ձեր երեխային օգնել ձեզ խառնել քարտերը և դասավորել սեղանի վրա երեսով դեպի ներքև:
- Թող երեխան շրջի քարտերից մեկը : Օգնեք նրան ասել քարտի վրա գրված թիվը:
- Հետո նա շրջում է երկրորդ քարտը: Եթե դա չի համապատասխանում առաջինին, ապա երկու քարտերն էլ նորից շրջում են երեսով ներքև: Իսկ եթե համապատասխանում է, ապա երեխան պահում է երկու քարտն էլ:
- Հաջորդ խաղացողը շրջում է երկու քարտ՝ փնտրելով համընկնող քարտեր: Ամեն անգամ քարտը շրջելիս խաղացողը պետք է ասի քարտի վրա գրված թիվը: Խաղացեք այս խաղը ձեր երեխայի հետ մեկ ամսվա ընթացքում:

Ինչպե՞ս կարելի է փոփոխել խաղը և հարմարեցնել ձեր երեխային

- Եթե խաղը դժվար է, սկսեք 1-5 թվերով համարակալված քարտերով: Երբ երեխան սովորի հեշտությամբ ճանաչել այդ թվերը, սկսեք խաղալ 6-10 թվերով քարտերով:
- Եթե երեխան արդեն ճանաչում է 1-10 թվերը, կարող եք պատրաստել քարտերի մի հավաքածու թվերով և մի հավաքածու էլ՝ 1-10 թվերը ներկայացնող կետերով: Երեխան կարող է օգնել ձեզ պատրաստել այդ քարտերը: Համընկնող քարտերը գտնելու համար երեխան պետք է գտնի թիվը պատկերող քարտը և այդ թվին համապատասխանող կետերով քարտը:

Միասին կարդացեք նկարը

- Ցույց տվեք երեխային, որևէ նկար, որտեղ կան մի քանի իր, խաղալիք, կենդանի կամ մարդ:
- Խնդրեք նրան խոսել նկարի մասին, օգնեք քննարկել նկարում եղած մաթեմատիկական հասկացությունները: Օրինակ՝ քանի՞ երեխա (խաղալիք, կենդանի, ծառ և այլն) ես տեսնում: Ո՞րոնք են ավելի շատ կամ քիչ, ասենք՝ ծառե՞րը, թե՞ ծաղիկները:

Խմբավորում (մայրիկին օգնում ենք լվացք անել)

Կարող եք երեխային խնդրել, որ օգնի ձեզ լվացքի շորերը խմբավորել (օրինակ՝ հագուստ, սավաններ, սրբիչներ): Քանի՞սը կա յուրաքանչյուր խմբում:

Կարող եք մտածել, թե ուրիշ ինչպես կարելի է խմբավորել լվացքը (օրինակ՝ բաց կամ մուգ գույնի շորեր, մեծ կամ փոքր շորեր և այլն):

Կարող եք նաև այլ բաներ խմբավորել:

- Երեխային լրբու կամ քարի հատիկներով լցված տուփ տվեք:
- Համապատասխան թվերով կամ որոշակի քանակի կետերով քարտեր պատրաստեք և երեսնիվայր դրեք սեղանի վրա:
- Խնդրեք երեխային շրջել քարտերից մեկը և վրան նշված թվով առարկաներ խմբավորել (ասենք՝ 5-ական քար, լրբի և այլն):
- Հետո շրջում եք մեկ այլ քարտ և այս անգամ դրա վրա նշված թվով եք առարկաներ խմբավորում (ասենք՝ 3-ական մատիտ, կոճակ և այլն):
- Երեխային առաջարկում եք ասել, թե խմբերից որում ավելի շատ կամ ավելի քիչ առարկաներ կան: Քանիսո՞վ ավելի և քանիսո՞վ պակաս:


Ինչպե՞ս կարելի է փոփոխել խաղը և հարմարեցնել ձեր երեխային

Եթե ձեր երեխան նոր է սովորում 1-10 թվերը, կարող եք անել հետևյալը.

- Խնդրեք երեխային կազմել 2 և 3 առարկաներից կազմված խմբեր և համեմատել դրանք:

- Հետո խնդրեք կազմել 3 և 4 առարկաներից կազմված խմբեր և համեմատել դրանք: Օգնեք նրան գրել իր կազմած խմբերին համապատասխանող թվերը:
- Ավելի ուշ կարող եք օգնել նրան ավելի մեծ քանակի առարկաներով խմբեր կազմել, որոնց տարբերությունը կլինի 2 և ավելի:

Հավաքիր հատիկները



- Մեծ թղթի վրա նկարեք սրա նման մի նկար կամ պատճենեք սա:
- Պատրաստեք քարտեր՝ 1-5 թվերով և երեսնիվայր դրեք սեղանին :
- Մի փոքրիկ թաս լրբու հատիկներ (կամ այլ փոքր առարկաներ) դրեք սեղանին:
- Յուրաքանչյուր խաղացող շրջում է մեկ քարտ: Խաղը շարունակում է նա, ով ավելի մեծ թիվ ունեցող քարտ է բացել:
- Այդ խաղացողը շրջում է ես մեկ քարտ և նկարի վրա առաջ է շարժվում այդ թվով վանդակներով: Այնուհետև ստանում է իր հասած վանդակի թվին համապատասխան քանակով լրբու հատիկներ (կամ որևէ այլ փոքր առարկա):
- Խաղը շարունակվում է մինչև բոլոր խաղացողները հասնում են վերջին վանդակին:
- Խաղի ավարտից հետո հարցրեք երեխային, թե իր կարծիքով, ով ամենաշատ հատիկներն ունի:
- Հետո հարցրեք, *թե ինչպես կարող ենք համոզվել դրանում:*

Ինչպե՞ս կարելի է փոփոխել խաղը և հարմարեցնել ձեր երեխային

Եթե երեխան դժվարանում է ճիշտ հաշվել, խնդրեք նրան տեղափոխել հատիկները մի կույտից մյուսը՝ մինչ դուք օգնում եք նրան հաշվել դրանք:

Թվերի որս

- Առաջարկեք երեխային «թվերի որս» կազմակերպել տանը:
- Խնդրեք, որ գտնի, ասենք՝ 5 թվանշանը:
- Երբ վերադառնա, հարցրեք, թե որտեղ է գտել այն:
- Հետո կարող եք առաջարկել այլ թվանշաններ գտնել:

Ինչպե՞ս կարելի է փոփոխել խաղը և հարմարեցնել ձեր երեխային

- Եթե երեխան նոր է ճանաչում թվանշանները, տվեք նրան մի քարտ, որի վրա փնտրվող թվանշանն է գրված: Քարտին նայելով նա կարող է հեշտությամբ գտնել դրան համապատասխանող թվանշանը տանը:
- Եթե երեխան հեշտությամբ է ճանաչում թվանշանները, խնդրեք գրանցել տանը գտած բոլոր թվանշանները:
- Կարող եք առաջարկել նաև հաշվել տան առարկաների քանակը, օրինակ՝ աթոռների, իր տիկնիկների կամխաղալիք ավտոմեքենաների և այլն:

Տեսակավորում

Տարբեր իրեր կամ առարկաներ տեսակավորելով երեխաները սովորում են դիտարկել, նկարագրել և տարբերակել առարկաների հատկանիշները:

Նման վարժություններն ավելի արդյունավետ կլինի կազմակերպել 3 փուլով:

1. Նախ, երեխան պետք է վարժվի որոշել, թե արդյոք տվյալ առարկան պատկանո՞ւմ է տվյալ խմբին, թե ոչ:

2. Երբ երեխան առարկաները երկու խմբի բաժանելու որոշակի փորձ է ձեռք բերում, կարող եք առաջարկել տեսակավորել առարկաների խմբերն ավելի փոքր ենթախմբերի: (Օրինակ՝ կարող եք երեխային տալ մի բուռ քարի հատիկներ և առաջարկել տեսակավորել ք ըստ չափսի: Քանի՞ հատիկ կա ամեն խմբում: Ո՞ր խմբում ամենից շատ/ամենից քիչ հատիկներ կան:

3. Վերջին փուլում երեխաները կարող են սովորել առարկաները տեսակավորել ըստ երկու և ավելի հատկանիշի: Օրինակ, կարող եք առաջարկել. «Մի խմբում դիր բոլոր կլոր և փոքր հատիկները, իսկ մյուսում՝ մեծ և երկարավունները»:

Երեխայի հետ տեսակավորելով առարկաներն ըստ խմբերի, ապա հաշվելով, թե քանի առարկա կա յուրաքանչյուր խմբում, դուք նրան լրացուցիչ հնարավորություն եք տալիս ձեր վարժվելու 1-10 թվանշանների հաշվարկում:

Ո՞րն է այս խմբից, իսկ ո՞րը՝ ոչ

- Հավաքեք 10 փոքր առարկաների հավաքածու, որոնք ունեն երկու կամ ավելի հատկանիշներ: Օրինակ՝ երկար և կարճ առարկաներ, ծանր և թեթև, նոր և ոչ նոր, կարմիր և ոչ կարմիր:
- Դրեք առարկաները սկուտեղի կամ ափսեի վրա:
- Խաղը սկսել՝ վերցնելով մի առարկա և ասելով՝ *սա այս խմբից է, որովհետև (ընտրեք որևէ հատկանիշ, ըստ որի տեսակավորելու եք, օրինակ՝ «կարմիր»):*
- Հետո ձեր երեխան ընտրում է մի առարկա և որոշում, այն ձեր ասած խմբից է, թե՞ ոչ: (Օրինակ՝ եթե կարմիր է, ուրեմն այդ խմբից է, եթե կարմիր չէ, ուրեմն՝ ոչ):
- Շարունակեք հերթով խաղալ, մինչև բոլորը առարկաները խմբավորվեն:

Ինչպե՞ս կարելի է փոփոխել խաղը և հարմարեցնել ձեր երեխային

Եթե առաջադրանքը *դժվար* է ձեր երեխայի համար, կրկնեք այն տարբեր առարկաներով, որպեսզի երեխան տեսակավորման փորձ ձեռք բերի:

Եթե առաջադրանքը *հեշտ* է երեխայի համար, փոխեք կանոնները, ասենք՝

- ընտրեք այնպիսի առարկաներ, որոնք մեկից ավելի հատկանիշ ունեն, օրինակ՝ տարբեր տեսակի կոճակներ,
- ընտրեք երկու կոճակ, որոնք ունեն երկու կամ ավելի ընդհանուր հատկանիշ, և դրեք ձեր առաջ: Օրինակ՝ կապույտ կոճակներ՝ 4 անցքերով:
- Խնդրեք երեխային պարզել, թե ըստ ինչ հատկանիշների է կատարվել տեսակավորումը (ասենք՝ կապույտ կոճակներ՝ 4 անցքերով): Այն բանից հետո, երբ երեխան պարզի տեսակավորման կանոնը, գտեք այդ խմբին պատկանող բոլոր կոճակները:
- Այժմ թողերեխան որոշի տեսակավորման սկզբունքները, իսկ դուք գուշակեք դրանք:
- Կրկնեք այս խաղը՝ օգտագործելով տարբեր մանր առարկաներ, որոնք կարելի է տեսակավորել:

Մրցող թվանշաններ

- Մի թղթի վրա վերից վար գրեք 1-10 թվերը (կամ այնքան, որ թվերն արդեն ճանաչում է ձեր երեխան):
- Նույն թվերի համար քարտեր պատրաստեք, բայց վրան ոչ թե թվերը գրեք, այլ համապատասխան քանակի կետեր դրեք:
- Խառնեք քարտերը և դասավորեք սեղանին երեսնիվայր:
- Խաղացողներից մեկը շրջում է մի քարտ, հաշվում է կետերը և թղթի վրա նշան է դնում այդ թվանշանի կողքին:
- Շարունակելով խաղը՝ յուրաքանչյուր խաղացող շրջում է մի քարտ և մի նշան դնում հաջորդ թվի կողքին:
- Խաղն ավարտվում է, երբ թվերից մեկի կողքին նախապես պայմանավորված քանակով նշաններ են հայտնվում (ասենք՝ 5 հատ):
- Հաղթում է այդ թվանշանը, որն ամենաշատ նշաններն ունի:

Ինչպե՞ս կարելի է փոփոխել խաղը և հարմարեցնել ձեր երեխային

Եթե երեխան հաճույքով է խաղում, հաճախ առաջարկեք խաղալ և խորհուրդ տվեք խաղալիս նշում անել հաղթած թվանշանի մոտ: Ամսվա վերջում օգնեք ձեր երեխային պարզել, թե որ թվանշանն է հաղթել բոլորից հաճախ:

Դասավորել առարկաները

- Հավաքեք մի խումբ առարկաներ այնպես, որ յուրաքանչյուրից լինի ամնվազն երկու հատ: Օրինակ՝ կոշիկներ, բաժակներ, գդալներ և այլն: Ընտրեք տարբեր չափսի առարկաներ՝ մի մեծ կոշիկ և մի փոքր կոշիկ:
- Սկսեք՝ տեղադրելով մի զույգ նույն առարկայից երեխայի առաջ և խնդրեք ընտրել, թե որն է ավելի մեծ (կամ ավելի փոքր, ավելի հաստ, ավելի բարակ, ավելի թեթև, ավելի ծանր և այլն):
- Կրկնեք այլ առարկաների խմբերի հետ:

Ինչպե՞ս կարելի է փոփոխել խաղը և հարմարեցնել ձեր երեխային

- Նախ ընտրեք այնպիսի առարկաներ, որոնց տարբերությունները զգալի են:
- Երբ երեխան առարկաների խմբերը կարգավորելու փորձ ձեռք բերի, կարող եք ընտրել այնպիսի առարկաներ, որոնց միջև տարբերություններն ավելի փոքր են ու ավելի դժվար նկատելի:

Տեղավորում

- Գտեք մի խումբ առարկաներ, որոնք տեղավորվում են իրար մեջ: Օրինակ՝ մի խումբ զամբյուղներ, թասիկներ, կաթսաներ, թավաներ, տուփեր կամ «մատրյոշկա» տիկնիկներ:
- Հանձնարարեք երեխաներին խաղալ դրանցով և դասավորել իրար մեջ՝ դնելով փոքրերն ավելի մեծերի մեջ:
- Քննարկեք նրանց հետ, թե ինչ են արել:
- Ո՞ր առարկան էր ամենից շատ բան տեղավորում:
- Ո՞րն էր ամենափոքրը:
- Կարո՞ղ են, արդյոք, տեղավորել բոլոր առարկաներն ամենամեծի մեջ:

Տարածության չափում

Սկզբում հարցրեք ձեր երեխային, թե նրա կարծիքով քանի քայլ է պետք (ոտքի կրունկը մյուսի ոտքի մատներին դնելով) սենյակի մի ծայրից մյուսին հասնելու համար: Գրի առեք նրա գուլշակած թիվը: Խնդրեք երեխային չափել սենյակի երկարությունը ոտք զցելով և համեմատեք նրա գուլշակած թիվը փաստացի չափածի հետ:

Կրկնեք վարժությունը տան կամ բակի այլ տարածքներ չափելու համար:

Առարկաների չափում

- Երեխային տվեք նույն չափի առարկաներ (մետաղադրամներ, լոբու հատիկներ կամ կոճակներ):
- Տվեք տարբեր երկարություն ունեցող առարկաներ և խնդրեք դասավորել դրանք կարճից երկար:
- Օգնեք չափել այդ առարկաները ձեր տված մետաղադրամների կամ լոբիների միջոցով (օրինակ՝ մատիտն ունի 10 մետաղադրամի երկարություն, գրիչը՝ 8 մետաղադրամի և այլն):

Ինչպե՞ս կարելի է փոփոխել խաղը և հարմարեցնել ձեր երեխային

Եթե երեխան դժվարանում է մեծ թվեր հաշվել, հանձնարարեք չափել փոքր տարածություններ կամ առարկաներ:

Եթե երեխան հաճույքով է չափում առարկաները, կարող եք խրախուսել նրան գրանցել իր չափման արդյունքները: Երբ նա որեէ առարկա է չափում, կարող եք հանձնարարել նրան նկարել իր չափած առարկան և գրի առնել չափման թիվը:

Օրինաչափություններ գտեք

- Գնացեք զբոսնելու տան շրջակայքում և օրինաչափություններ փնտրեք (օրինակ՝ քանի պատուհան կա պատշգամբների միջև: Դրանց քանակը միշտ նո՞ւյնն է: Եթե՝ այո, ուրեմն գտել եք օրինաչափություն. երկու պատուհան, մեկ պատշգամբ, երկու պատուհան, մեկ պատշգամբ):
- Կա՞ր արդյոք օրինաչափություն, օրինակ՝ ձեր երեխայի սվիտերի զուլերում. (ասենք՝ մեկ հաստ գիծ, 2 բարակ)
- Երբ սկսեք նկատել օրինաչափությունները, օգնեք երեխային որոշելու, արդյոք դա նոր օրինաչափություն է, թե նման է նախորդին:

Օրինաչափություններ ստեղծեք

- Վերցրեք երկու կամ ավելի տեսակի առարկաներ և դասավորեք դրանք որևէ պարզ օրինաչափությամբ: Օրինակ՝ փոքր մետաղադրամ, մեծ մետաղադրամ, փոքր հուլունք, մեծ հուլունք կամ՝ մեկ լոբու հատիկ, երկու ոսպի հատիկ: Խնդրեք երեխային գտնել օրինաչափությունը և շարունակել այն:
- Առաջարկեք երեխային ստեղծել որևէ օրինաչափություն, որը դուք պետք է գտնեք և շարունակեք:

Ինչպե՞ս կարելի է փոփոխել խաղը և հարմարեցնել ձեր երեխային

- Եթե երեխան դժվարանում է ճանաչել և շարունակել ձեր ստեղծած օրինաչափությունները, բացատրեք նրան, թե ինչ եք անում՝ դնելով առարկաները սեղանի վրա: Մի քանի անգամ խաղացեք այս օրինաչափությունների խաղը:
- Եթե խաղը դժվար չէ ձեր երեխայի համար, ստեղծեք ավելի բարդ օրինաչափություններ, օրինակ՝ կապույտ կոճակ, դարչնագույն կոճակ, մոխրագույն կոճակ, կապույտ կոճակ, դարչնագույն կոճակ և այլն: Կամ էլ երկու մեծ կոճակ, մեկ փոքր կոճակ և այլն:

Թվային հանելուկներ

Կազմեք մի շարք հանելուկներ, որոնք ստիպում են երեխային մտածել թվանշանների մասին: Օրինակ՝ Ես կենտ թիվ եմ, որը 5-ից մեծ է, բայց 8-ից փոքր: Ո՞ր թիվն եմ ես (7): Եթե բաժանեք ինձ առարկաների երկու կույտի, յուրաքանչյուր կույտ կունենա 2 առարկա, ո՞ր թիվն եմ ես (4):

Եթե վերը նշված հանելուկները չափազանց դժվար են երեխայի համար, ապա պարզեցրեք դրանք: Օրինակ Ես 2-ից մեծ եմ, բայց 4-ից փոքր եմ: Ո՞ր թիվն եմ ես: Կարող եք նաև երեխային տալ առարկաներ, որպեսզի օգնեք նրան գտնել հանելուկների պատասխանները: